

ԻՍՐԱՅԷԼ ՏԽՐՈՒՆԻԻ ՔՆԱՐԷՆ

ՈՒԽՏԱԽՈՐ

ԲՈՒՈՐ ՔԵՐԹՈՂՆԵՐՈՒՆ

Յանախ ձեզի կը բերեմ,
Ո՛վ եղբայրներ քնարի,
Վերջալոյսով գեղեցկացած իմ հոգիս....:

Երբ արեգակն, ոգեվա՛ր,
Լեբան ետեւ կը մեռնի,
Ձեզ կը բերեմ ուրուսեալած իմ հոգիս....:

Աշխարհը բիրտ ու հաշուող՝
Երբե՛ք, երբե՛ք չի կրցաւ
Խո՛րը նայիլ, լոյսո՛վ չափել իմ հոգիս....:

Ու այս գիշեր, ես նորէն,
Սրտիս ջահերն արիւնած՝
Ձեզ կը բերեմ երազաբա՛ղձ իմ հոգիս....:

Ձեր սիրածոր երգերուն
Լուսակարկաչ առուակին
Ալիքին մէջ կու գամ լըւալ իմ հոգիս....:

Ձի այս պա՛հն է գիշերին՝
Ուր մինչ մարդիկ կը նիրհեն,
Պաշտամունքի կ'ելլեն լուսինն ու հոգիս....:

Ինծի բացէ՛ք եղբայրներ՝,
Աղբիւրներ՝ը ձեր սրտին,
Գեղեցկութեան ծարա՛ւն ունի իմ հոգիս....:

Ես ալ կ'ուզեմ արբեմալ,
Մոռանալ ցաւս ու աշխարհ,
Ձոհ մը սիրոյ ընել ամբիծ իմ հոգիս....:

Խոր գիշեր է... Ա՛լ բացէ՛ք
Երազներու դուռն ոսկի.
Ինքզինքն հիմա Աստուած կը գգայ իմ հոգիս....:

Ի՛նչ փոյր անունը ձերին.
Արեւիքէն արեւմուտք,
Ձեզ կը կանչեմ դէպի անհուն իմ հոգիս....:

Բացէ՛ք, բացէ՛ք դուք բոլոր
Քընարակիր եղբայրներ,
Ձեր մատեաններն անմահութեան՝ հոգիս....:

Ձի ես կը գգամ որ արդէն,
Ձեր լուսափառ մէկ կայծէն,
Անմահորէն ա՛լ կը բռնկի իմ հոգիս....:

(Ամսօրեայ տեղեկատու, 1910, Յուն.-Փետր. էջ 116-117)

ՄԱՅՐՍ

«Որդի՛ս, ինչո՞ւ ես տըխուր, քըլի քէ շա՛տ ես տանջուած.
Եկո՛ւր, գըլուխդ հանգչեցո՛ւր - ահա՛ կուրծքս քեզի բարձ:
Աչքերուդ մէջ գիշերին դեռ կայ քալիծն ու խաւար,
Ո՞ր մեռակեաց չար ոգին յանձնեց քեզի այդ քնարն...»

Այսպէս գիշեր մ'եկաւ ան իր խո՛ր շեշտով մայրական
Թախանձել զիս, որ լը՛ֆած երազներուս իմ աշխարհին՝
Դա՛րձեալ հոգիս խառնեմ իր գորովանքին անսահման....:

Իսկո՛յն աչքերս անի վեր, տեսայ դէմքը դալկահար,
Եւ իմ արցունքս էր սառած իր աչքին մէջ՝ գերդ գոհար,
Իսկ իր հոգին՝ բարութեան ի՛նչ տիեզերք քովչական:

Ես՝ սրտաբեկ որդիական կու տամ իրեն պատասխան.
— «Մինչ ուրիշներ, մա՛յր, կու լան՝ երբ ցաւ մ'ունին անդարման,
Քերթողին մէջ կը փոխուի վիշտը՝ երգի, երազի
Ձի կեանքն անոր ջրվէժ մ'է, որ՝ երգելով կը հոսի...»:

(Ոստան, 1911, էջ 97)

Ս Ո Ւ Փ

Արցունք չունիմ. աչքէս արիւն կը վազէ...
Տարիներ ետք, մա՛յր, իմ սէրըս՝ զերդ բազէ՝
Բուռն քափով միշտ դէպի քեզ կը բռնի.
Կեանքիս տանարն իր ցաւին տակ կը փլչի
Եւ աչքերէս՝ արցունքի տեղ արիւն է որ կը վազէ....:

Տարիներ ետք, մա՛յր, իմ սէրըս, զերդ բազէ,
Անմահական մէկ ժըպիտիդ երազով
Խելակորոյս՝ միշտ դէպի քեզ կը նախքէ.
Բայց սեւ հողն յար բաժներ է մեզ՝ իբրեւ ծով,
Ու երբ կու լամ՝ արցունքի տեղ՝ աչքէս արիւն կը վազէ....:

Անմահական մէկ ժըպիտիդ պատրանքով՝
Երբ տխրօրէն ես կը քրքրեմ մի առ մի
Յուշերդ անգին, որոնցմով դեռ սիրտս է լի,
Կը կարծեմ քէ՛ միշտ կը հսկես դուն իմ քով.
Բայց, յուսախա՛ր, երբ լա՛լ կ'ուզեմ՝ աչքէս արիւն կը հոսի:

Երբ տխրօրէն ես կը քրքրեմ մի առ մի
Յուշերդ անմահ՝ սիրտ, վշտի, գորովի,
Ու երբ հիմա, անոցմէ գո՛ւրկ, վաղածամ
Բիւր ցաւերով վարդն իմ կեանքիս կը խամրի,
Մայր, կարծես քէ՛ ա՛լ ցուրտ շիրմիդ մըտերմութիւնը կը զգամ....:

(Ոստան 1911, էջ 604)

Խ Ս Ջ Ե Լ Ո Ւ Փ Ի Ի Ն

... Եւ այս գիշեր դիւային ոգիներ զիս պաշարած՝
Սրտիս վըրայ կը խաչեն հէգ մայրս՝ իբրեւ նոր աստուած,
Ու դառնօրէն ես կը զգամ իր խոր վիշտը մայրական,
Ահա՛ ցաւին բեւեռներն հոգիիս խո՛րը մըտան...
Եւ մինչ աչքերս՝ աղերսու կ'ուղղեմ աստղին կամարի,
Աշխարհին մէջ հոգիիս իր արեւը կը մարի....:

(Ազատամարտ 1912, էջ 2)

Թ Բ Ք Ս Կ Ա Ն Ք Ա Ղ Ա Ք Ը

Սարսափահար գետնին փակած խրնիքներու կոյտ մը սեւ,
Ծամածուռ եւ խորդուրորդ նեղ անցքերէ դաշոյնուած՝
Քաղաքն է սա քրքական....:

Որ ահա՛
Խաւարո՛վը գիշերին
Կը պատանձուի առ տակաւ:
Փողոցները լո՛ւռ են արդէն,
Ամայի՛....
Միայն հոս-հոն սովալըլուկ շուներու
Վռնմակ մը դեռ կը յածի՝
Տուներէն դուրս նետուած ոսկորն իրար բերնէ խլելու:

Պատուհանէս կը նայիմ քաղաքն վըրայ այս մռայլ,
Ուր ամէն կեանք կարծես վաղուց է շիջեր....:
Ո՛չ մէկ քրքիջ, ո՛չ երգի խաղ, ո՛չ մէկ ճիւղ.
Քաղաքն ամբողջ դամբարա՛ն մ'է լոկ շնչող:
Գիշերն՝ ինչպէս չղջիկ մը սեւ՝ անսահման՝
Լուռ քաղաքն վրայ իր քեւերն է տարածեր,
Իսկ փողոցին պատերուն տակ՝ կիսամեռ
Լոյսերն, աւա՛ղ, արտասուելէն կուրցած աչքեր են միայն....:

Հիմա վերէն, Անյուսութեան պէս տրտում,
Քաղաքն վըրայ կու լայ անձրեւն անդադար,
Մինչ, Լըբումին պէս մի՛ս-մինակ, ինքնասոյգ,
Ես կը խորհիմ իւրովի՝
Թէ մարդն արդեօք հոս արեւէն չէ՞ խրմեր
Հառազայք մը գեղեցկութեան ու կեանքի.
Գուցէ երբեք մարդկութիւնն հոս չէ՞ ապրեր
Իր տենչերով աստղագօծ,
Իր յոյսերով սիրավառ....
Ու վաղն արդեօք կրկին արեւ կը ծագի
Այս քաղաքն վրայ՝ ուր մարդիկ,
Լո՛ւռ ու տրտում. կարծես Մահը կը սպասեն....:

Բայց լըռութիւնն այդ մահաբոյր, որ գուցէ
Վաղուան Ոնիրն իր ծոցին մէջ կը քննէր,
Չայնով մ'յանկարծ կ'ընդհատուի....:
Մօլլայի ձայնն եղբորէն յուսաբեկ,
Որ բարձունքէն մինարէին կ'աղօթէ,
«Ալլա՛հ Էքպէր» կը պատգամէ մարդերուն՝

Որ լո՛յս չունին, երա՛գ չունին, յո՛յս չունին...
 Սա խրճիթին աղօտ լոյսն ալ, վերջապէս,
 Ա՛յնքան նըման խոնար շունչէն կը մարի...:
 Վերէն, սակայն, դեռ մօլլան՝
 Ձեռքն երեսին՝ չորս հովերուն կ'աւետէ.
 — «Ալլա՛հն է մէծ, Մուհամմէտ՝ իր մարդարէն»:
 Շուն մը յանկարծ, որ կարծես
 Իր քունին մէջ խռովայոյճ՝
 Կոյր փողոցին ցելին մէջ ձի՛գ կը կանգնի
 Եւ մըքագին երկինքն ի վեր
 Կ'ոռնայ ձայնով մ'ողբագին...:

(Երկունք, Ա. տարի, 1912, № 71, էջ 3)

ՀԱՆԳԻՍՏ

Մերք ինձ կու գայ քէ ոչի՛նչ աշխարհի մէջ կը մեռնի՛.
 Կեանքն ի՛նչ փոյթ քէ՛ մերք վշտի եւ արցունքի ըլլայ ծով,
 Երա՛գ մ'է ան՝ ուր իրար կը շօթայունին մի առ մի
 Երէկն ըմբո՛ստ, այսօրն հէգ, վաղն իր արե՛ւ յոյսերով...:

Ես կը սիրեմ երա՛գն այդ: Անմա՛հ է ան լոյսին պէս,
 Խոռովիչ՝ իբրեւ գերեզման...: Ու երբ ահա առջեւէս՝
 Հագած մըռա՛յլը մահուան՝ կ'անցնին դէմքեր սիրական,
 Կ'անցնին տենչերը ջախջախ ու երագներս ալ շուշան,

Ես, սրգակի՛ր ուղեկից, անոնց անդա՛րձ քայլերուն
 Կը հետեւիմ գլխահակ...: Բայց ա՛լ ուշ է...: Երբ հեռուն
 Վերջալո՛յսն ալ կը մեռնի՛ անմահութեան մը հանգոյն,

Ես յոգնաբեկ կանգ կ'առնեմ երագներուն լուսնին տակ,
 Եւ մինչ աստղեր ճակտիս շուրջ կը փրփին գերդ վառ պըսակ՝
 Իր բազկաց մէջ զիս կ'առնէ Գիշերն՝ անբիծ կոյս սեւակ...:

Պոլիս

(Ոստան, 1912, էջ 271)

Մենութեան մէջ կու լամ անվերջ...:
 Հոգիիս խորն արցունքի
 Անդունդ մը կայ մահուան չափ սեւ՝ անյատակ,
 Ուրկէ աչքիս գիշերին մէջ
 Կաթիլ մ'յանկարծ կը վառի՛
 Մայրական խոր սիրոյն նըման անապակ...:

☆

Այդ արցունքը, մերք քերքում մ'է բիրեղեայ,
 Մերք պարտւած անյագ սէր.
 Մերք հինաւորց վրէժի կոքող մը հսկայ՝
 Զոր բռնութիւնն է դարբներ:

(Ոստան, 1912, էջ 107)

ԱՅՍ ԳԻՇԵՐ

Այս գիշեր հին ճգնաւորի մը նըման,
 Որ իր գըլուխն է ծածկեր
 Մոխրներու սուգին տակ
 Ես մեռակ եմ մենութեան ցուրտ ծոցին մէջ:

Եւ, աւա՛ղ, գուր կը սպասեմ
 Այն մըտերիմ հին երգին,
 Որ պիտի գար գգուել հոգին իմ լիւսած.
 Ալ չեմ ուզեր հաւատալ,
 Թէ ե՞ս էի արդեօք այն
 Լոյս պարմանին երբեմնի,
 Որ մայրական անբիծ կաթով գերարբած,
 Երջանկութեան առաւօտներն, արեւու
 Ճանաչներով կը համբէր,
 Ու երազի հեծած նիւթով հոլանի,
 Կ'երբար հարցնել աստղերուն
 Կեանքի ուղին մոլորուն...:

Այսօր երագս է մեռե՛ր...
 Կայ տրամութիւնը միայն
 Որ սըփոներ է ըստուերն իրեն մահաբեր
 Կեանքիս աւերին վըրայ:

Բայց կարօտներ ունիմ դեռ .
 Ունիմ սէրեր հըրեղէն :
 Ու երբ այսօր վերըստին,
 Զինուոր մ'ինչպէս վիրաւոր,
 Երգ մ'յաղթութեան ոգեկոչել կը փորձեմ
 Եւ բարձրանալ կ'ուզեմ աղբիւրն յոյսերուս,
 Կը ծալուին ծունգերս, աւա՛ղ, կը մեռնի
 Երգը վըրան շրթներուս... :
 Ու կարօտի աղբիւրին գով ջուրին տեղ,
 Իմ վերքերուս կ'ըմպեմ արիւնը կարմիր... :

(Ս. Ժամբուր, տեղեկատու 1913, թ. 27, էջ 45)

ՄՐՏԻՍ ԱՂԲԻՒՐԸ

Մարգարիտո՞վ քէ արցունքով ես հիւսուած,
 Ո՛վ ջինջ աղբիւրը սրտիս,
 Որ՝ երգ մ'ինչպէս արեամարիտ եւ ըմբոստ՝
 Խաւարին մէջ կ'աղաղակես եւ լոյսին .
 Ծործորներէն կը վազես... :
 Յաւէտ քեզի՛ կու գայ հոգիս, երբ կեանքէն
 Պատրանաքա՛փ, վիրաւոր,
 Երգ մը կ'ուզէ այնքան հըգօր ու ջերմին
 Որ հարագատն ըլլայ անոր վիշտերուն :
 Հոսէ՛, աղբիւր . նամբէդ՝ յոյսին պէս դալար...
 Ու մի՛ ցամփիր .
 Գիշերն ահա իր ֆօղին տակ կը քաղէ
 Մարդն անճանատուր կիրքերու,
 Ու երբ շուրջըդ լուռ եմ փառքերն ալ ըստուկ,
 Բա՛ց անվեհեր հայլիդ պայծառ, բող քափէ
 Հոն լուսընկան իր կարն անուշ...
 Թող հոն աստղերն, իբր ադամանդ,
 Անհունօրէն ցոլցոյին :
 Ու դուն վազէ, գերդ պատանի խենքեցած,
 Միբոյ հովտէդ, որու դեռ
 Վախնանն, աւա՛ղ, չըգիտես :

Հոսէ՛ անվերջ, կարմիր աղբիւրն իմ սրտիս...
 Յորդէ՛ լոյսով՝ ինչպէս գետը Սրբազան,
 Որու ափին նստած հնդիկ աղջիկներ,
 Կը հարցընեն պատգամն իրենց սէրերուն... :

Ահա կու գամ, ալեակիդ մէջ, քրմօրէ՛ն
 Օծել պատկերն երագներուս ցաւագին :
 Թո՛ղ յաւիտեան ըլայ խորհուրդն անապակ
 Ակդ ուր, փոխան սառ աստղերուն երկնքի,
 Ես ցաներ եմ իմ արցունքներս հըրավառ :

(Երկունք, Բ. տարի, 1913, էջ 243)

ՄԻ՛ ՓՈՐՁԵՐ...

Կ'ըսես քէ ծովին կապոյտը համակ աչքերդ եմ տըւեր,
 Գարնան արեւն ալ վարսերն ոսկեքել քեմէ փոխ առեր,
 Սակայն ես ի՛նչպէս
 Կրնամ սիրել քեզ...
 Հոգւոյս խորքին մէջ քաղուած եմ միայն ցուրտ մոռացութեան
 Յուշեր տրտմալի՛, երագներ մեռած... Սիրտս է գերեզման... :

Կ'ըսես քէ դո՛ւ ես վառ ծաղիկներու բոյրէն արքեցած
 Աղջի՛կը անվիշտ, սիրելու համար լոկ աշխարհ եկած... :
 Բայց մի՛ փորձեր զիս,
 Կո՛յս, ցաւ է հոգիս :
 Տե՛ս, հոն ո՛րքան խոր արմատ եմ ձրգեր սեւ ատելութեան
 Հսկայ նոնիներ : — Հոն դեռ չէ ծաղկած սիրոյ մեր շուշան... :

Կ'ըսես քէ Յոյսին մեծ անտառներէն սըրինգդ ես կըտրեր
 Եւ անփո՛յք կ'երգես երջանիկ կեանքի ըզզլիսիչ երգեր .
 Կո՛յս, երգդ է ի գո՛ւր,
 Հոգիս է տըլտուր... :
 Այնտեղ, ահռելի ըսպանդի մը մէջ — ոնի՛ր խօլական —
 Յուրտ սուսերներու հարուածներուն տակ եղբայրներ՝ս ինկան... :

Կ'ըսես քէ կեանքն ես բոլոր կեանքներուն եւ անմահական
 Համադրութիւնը՝ լո՛յսը երագի՛ ու գերդ երկնքին վըրայ լուսընկան
 Հանգչեցնել կամիս
 Գլուխդ իմ կուրծքիս... :
 Բայց ա՛լ լըքէ՛ զիս... : Աչքերուդ մէջէն ծախուած բիւր կոյսեր
 Ինձ կ'ուղղեն ահա՛ բռունցքներն շանքահա՛ր... Թո՛ղ զիս մի՛ փորձեր...

(Շանթ, 1912, էջ 93)

ՈՍԿԻ ԱՇՈՒՆ

Ահա գրկիդ մէջ նստեր ու դառնօրէն ես կու լամ,
Ոսկի աշուն պտղալից, զմրուխտ աշուն – կին փարթամ...
Ու կը յիշեմ՝ իբր երագ՝ որ երէկ էր տակաւին,
Երբ հերարձակ կը վազէր մանկութիւնըդ տենչավառ,
Կու գար բոսոր պարտէզներէդ օրն ի բուն
Քաղել խնձոր, դեղձ, քուզ ու նուռ ոսկեհատ:

Տարիներ են սահեր արդէն:

Ես պարպեցի

Կեանքին բոլոր դառնութեանց

Բաժակները մինչ մըրբուր...

Դուն սակայն,

Կախարդուհի մշտածին,

Ահա կրկին բացած գանձերդ այլազան՝

Գինարբուհի զիս կը կանչես, երբ բոլոր

Ծառերդ յըզի եւ ըզգաստ՝

Պըտուղներու իրենց քաղցր բեռին տակ

Հարսերու պէս կ'երագեն...:

Եւ ահա ես քեզի՝ կու գամ

Հըրապոյրէդ պարտւած

Որ բռնակալ կեանքին համերգն է հըգօր...:

Ինձի նըման օր մը քեզի պիտի գան

Անոնք որոնց նակատն անբոյժ վիրաւոր՝

Մըտածումի եւ վշտերու կը պահէ խոր ակօսներ,

Ու գիտեն քէ բոլոր բոլոր գարուններն

Իրենց փարփառ վարդերով

Միայն պատրանք են եղեր...:

Պարմանիներն այսուհետեւ քող երթան

Պաւակներէն իրենց համար

Ծաղիկ ու խինդ քաղելու.

Ես պիտի գամ լոկ այն ատեն երբ մեղուն

Բոյրով, մեղրով բեռնաւոր՝

Կ'երթայ այլեւս իր փեթակին մէջ հանգչիլ,

Մինչեւ նորէն ծիրանին

Պարտէզին մէջ կը բռնկի...:

Ես պիտի գամ իբր առաքեալ մը՝ որուն

Հոգիին ցուրտ անդունդին մէջ,

Զերդ մըրբիկ,

Աստուածուհի մ'հիմաւորց
Տարաշխարհիկ կարօտներու, սէրերու
Իր մէկ պարն է կախաւ...:

Զմրուխտ աշուն, ես այսօր

Կ'ուզեմ քեզի բերել

Վերքերն հոգիիս,

Ի՛նչ փոյր քէ հոն ողկոյզներէդ, դեղձերէդ՝

Փոխան մեղրի քաղցրաբոյր՝

Լըժումն իր սեւ քոյնը ծորէ շիթ առ շիթ,

Ու զիս ծաղրեն հոլանի ու պերնհասակ

Կոյսերն ամէն որ ահա՝

Վաղուան կարմիր կայքատօնին ի խնդիր

Սարփինաներդ արբշտօրէն կը կըքեն...:

Այսուհետեւ, ոսկի աշուն, միայն դո՛ւն

Կրնաս իմ սիրտը կարդալ...

Տերեւաքափ ծառերուդ

Ա՛յնքան նըման իմ հոգիս՝

Յրուած այլ եւս իր երագներն ոսկեվառ՝

Իրեն նըման լրտակեաց եւ անխըռով

Կոնդի մը վրայ կը նստի,

Եւ քափառիկ տերեւներուդ

Դիակներուն հետ անվերջ՝

Մեռելապար դարձող հովին

Երգին մէջէն կ'ունկնդրէ

Քայլափոխին Անծանօթին, որուն դեռ

Գացած ուղին ո՛չ ոք կրցաւ հասկընալ...:

Դեկտեմբեր 1915

(Ամէնուն Տարեցոյցը, ԺԹ. տարի, 1925, էջ 81-83)

Փ Ե Ղ Օ Ն

Յանախ ձեզի կը խորհիմ,

Աշխատանքի, սեւ հողի

Ո՛վ յոգնատանջ հերոսական եղբայրներ:

Երբ արեգակն ոգեվար

Զեր նակատներն համբուրելով կը մեռնի,

Դուք մըտախոհ՝ մանին վըրայ միշտ հակած՝

Դեռ կը չափէ՛ք անհունը ձեր սրտերուն,

Ես միշտ ձեզի կը խորհիմ:

Պատի՛ւ ձեզի:
Դաժան նամբուն մէջ կեանքին,
Դուք անանուն հերոսներ.
Միշտ կը կերտէ՛ք, աստուածօրէն միայնակ,
Հանապազօր հացն օրհնեալ
Ուրիշներու սեղանին՝
Ամէն օր ձեր կեանքէն մաս մը քաղելով
Ակօսներուն մէջ լայնշի.
Բայց ըսէ՛ք,
Ո՞վ պիտի գար կշռել ձեր վիշտն ու դրնէր
Դափնի մը ձեր նակատներուն,
Զոր կ'օծէ
Կոյս առաւօտը միայն՝
Մարգրիտովն իր ցօղերուն...:

Այսպէս կ'անցնիք անաղմուկ,
Դուք մոռցրած հերոսներ,
Անփառունակ եւ յանախ
Զրկուած ձեր իսկ քրտնիքի
Խունկով շաղուած սուրբ հացէն.
Որովհետեւ սուր չունիք
Ու ձեր անցած ուղիներէն չի հոսիր
Արիւնը ձեր եղբայրներուն, այլ գինով
Կ'երգէ արտայտը միայն՝
Զեր տաժանքը մեղմելով...:
Ու ես գիտեմ
Որ պատմութիւնն ոսկետառ
Զեզի համար երբեք, երբեք չի բանար
Էջ մը պատուի դարէ դար...
Ուստի այսօր, ո՛վ անձնուրաց եղբայրներ,
Ներեցէ՛ք ինձ որ գամ ձեզի ես ձօնել
Իմ այս երգը նմիքի...:

1915 Մայիս 1, Չանդլըրի

(Շանթ, 1919, էջ 429)

ԲԱՐՍԵՂ ՇԱՀՊԱԶ

Արիս Իսրայէլեան բանաստեղծին նա-
հատակակից, եւ անոր դասընկեր՝ Մու-
րատ-Ռափայէլեան վարժարանի մէջ 1899
-1901ի շրջանին, հրաշունչ գործիչ ու դը-
րե՛հ, Բարսեղ Շահպաղ ծնած է Պոլիս
1883ին:

Հ. Սիմոն Երեմեանի վկայութեան հա-
մաձայն, Մուրատ-Ռափայէլեանի աշա-
կերտութեան օրերէն իսկ կը յայտնէր իր
արտակարգ առաջնորդողի խանդոտ հոգին
եւ համարուած էր վարժարանին ամէնէն
տաղանդաւոր ու տիպար աշակերտներէն
մէկը*:

Պոլիս վերադարձին, չունէր կ'առնէ հայ
խմբադրաստուներու մէջ եւ ուշադրաւ կը
հանդիսանայ իր կրակոտ ու զեղոճ յօդ-
ուածներով: Միքայէլ Շամտանճեանի հետ
կ'աշխատակցի «Ծաղիկ» դրական թեր-
թին:

1901ին, Օրմանեան Պատրիարքի վրայ
կատարուած մահափորձի ժամանակ, խոյս
կու տայ Եզրիպոս: Աղեքսանդրիա հա-
տառուէ՛ք ետք, բոցաշունչ յօդուածնե-
րով լեցուն կը հրատարակէ «Կրակ» շա-
րով լեցուն կը հրատարակէ Օտեանի
բաթաթերթը, 1906ին, Երուանդ Օտեանի
հետ: 1908ին կը հրատարակէ «Մտրակ»
երկշարթաթերթը: Այդ շրջանին լոյս կը
տեսնեն «Այլասիրութիւն եւ Եսասիրու-
թիւն» (տպ. Աղեքսանդրիա 1907ին, էջ
49), բանախօսութիւն մը արտասանուած
Ժընեւի մէջ 1907ի Մարտ 23ին, ինչպէս
նաեւ «Հաջիւններ» հատորիկները:

Ամուսնութենէն ետք կը հաստատուի
Փարիզ, 1911ին, ուր կը սորվի իրաւա-
բանութիւն: Մ. վարանդեանի հետ կը
խմբագրէ «Pro Armenia» Փրանսերէն
թերթը. միեւնոյն ատեն կ'աշխատակցի
«Ազատամարտ», «Հայրենիք», «Հորիզոն»
թերթերուն:



Բարսեղ Շահպաղ Մուրատ-Ռափ.ի
աշակերտութեան օրերուն

Փաստարանութեան վկայականն ընդու-
նելու վրայ, տարադրութիւններու նախօ-
րեակին, Պոլիս կ'անցնի յատուկ պաշտօ-
նով, յանձնարարութեամբ վիճակորդ Պե-
րարի: Գաւառին մէջ ալ իր կրակոտ բա-
նախօսութիւններով մեծ ժողովրդակա-
նութիւն կը շահի:

Փոթորիկը պայթած էր. մեռելներու
կարաւանին մէջ զինքն ալ կը նետեն: Զար-
դարարները զինք վար կը դնեն տարադը-
րեալներու խումբէն, Սերառտիոյ մօտ,
ըստ Հ. Սիմոն Երեմեանի, եւ կը զլխատեն
այն քարին վրայ՝ ուրկէ երեք տարի առաջ
հրաշունչ բանախօսութիւններ կատարած
էր:

Իր մահով ազգը կը կորսնցնէր իրաւա-
դէտ, ընկերարան դրող մը եւ առաջնորդ
մը հանրային կեանքին:

(*) Հմմտ. «Բագմավէպ» 1936, էջ 279: